# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"19" մարտի 2013թ № 28-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՐ ՏՈԿՈՍ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ <<ԴԱՐԲԱՍԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ՝ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2011թ. հոկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցութային կարգը հաստատելու մասին» N 145-Ն որոշման 6-րդ կետով, ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել Սյունիքի մարզպետարանի ենթակայության հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող՝ <<Դարբասի առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության գործադիր մարմի՝ տնօրենի ընտրության մրցութային հանձնաժողովի հետևյալ կազմը.

| | |
|---|---|
| Մարդյան Աշոտ | աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ |
| Ծատրյան Աշոտ | աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ |
| Կոզմանով Կառլեն | աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ |
| Սահակյան Սիլվա | աշխատակազմի քարտուղարության պետ |
| Հովհաննիսյան Անահիտ | աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ |
| Ղազարյան Թադևոս | աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ |
| Գևորգյան Նունե | առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ |

2. Մրցութային հանձնաժողովի նախագահ նշանակել Աշոտ Ծատրյանին:
3. Մրցութային հանձնաժողովի քարտուղար նշանակել Կառլեն Կոզմանովին:
4. Աշխատակազմի ղեկավար Ռ.Ղազարյանին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2013թ. մարտի 19
ք. Կապան